

ՀԾ-Առևտուր

համակարգի նկարագրությունը

հայկական ծրագրեր

Առևտրային գործունեության ավտոմատացման համակարգ

Առևտրական գործունեությամբ զբաղվող յուրաքանչյուր կազմակերպության արդյունավետ գործունեությունը պահանջում է.

1. նվազեցնել ձեռքբերման, գույքագրման և առաքման ժամանակ կատարվող սխալները,
2. կամայական պահին լինել ճշգրիտ տեղեկացված ապրաքների մնացորդներից,
3. կրճատել գույքագրման վրա ծախսվող ժամանակը,
4. ապահովել պահանջարկ ունեցող ապրանքների անհրաժեշտ քանակությունը,
5. խուսափել պահեստում ապրանքների ավելորդ կուտակումներից:

ՀԾ-Առևտուր համակարգը կօգնի խորությամբ լուծել այս խնդիրները, ավտոմատացնել առևտրական կազմակերպությունների գործընթացները և հեշտացնել կառավարումը:

Այն ապահովում է մանրա-մեծածախ առևտրի և պահեստային գործունեության կառավարման ամբողջական ավտոմատացում, նաև ունի մի շարք հատկություններ, որոնք հատկապես կարևոր են ոչ մեծ կազմակերպությունների համար:

ՀԾ-Առևտուր համակարգի հիմնական առանձնահատկությունները

Տեղադրման և օգտագործման պարզություն

Համակարգի տեղադրումն ու դրա հետ հետագա աշխատանքը շատ պարզ են և չեն պահանջում կազմակերպությունում տեխնիկական մասնագետի ներկայություն կամ օգտագործողների խորը վերապատրաստում: Համակարգի տեխնիկական պահանջները բարձր չեն, այսինքն կազմակերպությանը սովորաբար անհրաժեշտ չի լինում համակարգի շահագործման համար ձեռք բերել լրացուցիչ համակարգչային տեխնիկա կամ ծրագրային ապահովում:

Համակարգի համակողմանի սպասարկում

Հաճախորդների հետ երկարատև աշխատանքից կուտակած փորձի արդյունքում մենք մշակել ենք նրանց աջակցման տարբեր եղանակներ՝ համակարգից օգտվելու առավելագույն հարմարավետություն ապահովելու համար

- դասընթացներ տեխնիկապես հագեցած ՀԾ ուսումնական կենտրոնում
- հեռախոսային սպասարկում ՀԾ փորձառու մասնագետների կողմից
- հեռահար սպասարկում ինտերնետի միջոցով անմիջապես պատվիրատուի համակարգչին միացմամբ
- նոր տարբերակների ներկայացումն սեմինարներ
- անընդհատ համալրվող հոդվածներ ՀԾ հաճախորդների սպասարկման պորտալի գիտելիքների շտեմարանում
- համակարգի ներդրման և խորհրդատվական աշխատանքներ գործընկերների կողմից

Լայն հաշվետվական հնարավորություններ

Համակարգում ընդգրկված հզոր հաշվետվական համակարգը թույլ է տալիս ստանալ ոչ միայն անհրաժեշտ բոլոր հաշվետվությունները, այլև բազմաթիվ այլ հաշվետվություններ, որոնք թույլ կտան անընդհատ տիրապետել կազմակերպության վիճակի ամբողջական պատկերին և ընդունել արդյունավետ որոշումներ: Համակարգն նաև ունի հաշվետվությունների ձևավորման ճկուն գործիք, որը թույլ է տալիս նկարագրել ու ստանալ կազմակերպությանը հատուկ հաշվետվության ձևերը:

Պարբերաբար լույս են տեսնում ՀԾ-Առևտուր համակարգի նոր տարբերակներ: Նոր տարբերակներում ավելանում են նոր հնարավորություններ՝ օգտագործողի աշխատանքը ավելի արդյունավետ դարձնելու համար:
Կազմակերպվում են սեմինարներ, որոնց ընթացքում ներկայացվում են ՀԾ-Առևտուր համակարգի նոր տարբերակներում տեղ գտած փոփոխությունները:

Անսահմանափակ քանակությամբ հաշվառումներ վարելու հնարավորություն ՀԾ-Առևտուր համակարգում կարելի է վարել անսահմանափակ քանակությամբ կազմակերպությունների հաշվառում՝ անկախ նրանից դուք օգտագործում եք համակարգի ցանցային, թե՛ մեկ աշխատատեղի տարբերակը:

Համակցում ՀԾ-Հաշվապահ համակարգի հետ
ՀԾ-Առևտուր համակարգը համակցված է ՀԾ-Հաշվապահ համակարգի հետ, ինչը թույլ է տալիս ապրանքների և գնորդների տեղեկությունը և վաճառքի փաստաթղթերը ներմուծել հաշվապահական համակարգ և խուսափել նույն տեղեկության կրկնակի մուտքագրումից:

Համակցում էլ հարկային հաշիվների համակարգերի հետ
ՀԾ-Առևտուր համակարգից հարկային հաշիվները արտահանվում են էլ. հարկային հաշիվների eInvoicing համակարգ, որտեղից կատարվում է մատակարարներից ստացված հարկային հաշիվների ներմուծում:

Համակցում MS Word, MS Excel, Open Office ծրագրերի հետ
Համակարգից տվյալները կարող են արտահանվել MS Word, MS Excel միջավայրեր:

Երաշխավորված վաճառք
Եթե ՀԾ-Առևտուր համակարգը լիովին չի բավարարում Ձեր պահանջներն ու ակնկալիքները, կարող եք այն հետ վերադարձնել ձեռքբերման օրվանից 6 ամսվա ընթացքում և ամբողջությամբ հետ ստանալ դրա համար վճարված գումարը:

Համառոտ Ֆունկցիոնալ նկարագրություն

Ձեռքբերումներ

- ապրանքների ձեռքբերում մատակարարից
- ապրանքների ներմուծում
- ապրանքների ձեռքբերման հետ կապված հավելյալ ծախսերի արտացոլում (տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման ծախսումներ և այլն)
- ապրանքների վերադարձ մատակարարին
- կանխիկ եւ անկանխիկ վճարումներ մատակարարին

Վաճառքներ

- ապրանքների վաճառք գնորդին, նաեւ՝ զեղչերի կիրառումով
- ապրանքների վերադարձ գնորդից
- կանխիկ եւ անկանխիկ դրամական միջոցների ստացում գնորդից

Պահեստ

- ապրանքների ներքին տեղաշարժեր պահեստների միջեւ
- ապրանքների գույքագրում պահեստում
- հավաքածուի (կոմպլեկտի) մուտքագրում պահեստ և անհրաժեշտ քանակությամբ նյութական արժեքների (կոմպլեկտի բաղադրամասերի) ելքագրում

Հաշվետվություններ

- պահեստներում եւ խանութներում ապրանքների գումարա-քանակային շարժ եւ մնացորդներ
- դրամական միջոցների շարժ եւ մնացորդներ
- մատակարարների եւ գնորդների պարտք ու պահանջներ
- ապրանքների վաճառքների գումարա-քանակային ծավալների վերլուծություններ
- շահույթի կամ վնասի վերլուծություն

Բազմարժութային հաշվառում

- ապրանքների մնացորդների եւ շարժի զուգահեռ հաշվառում երկու արժույթներով՝
- դրամով եւ լրացուցիչ այլ արտարժույթով (օրինակ ԱՄՆ դոլար)
- ձեռքբերման եւ իրացման փաստաթղթերի ձեւավորում ցանկացած արժույթով
- գնորդների եւ մատակարարների պարտքերի ու պահանջների արժույթային հաշվառում
- դրամական միջոցների մնացորդների եւ շարժի հաշվառում տարբեր արժույթներով

Գներ եւ գնացուցակներ

- ապրանքների գների տարբեր տեսակներ (օրինակ՝ մեծածախ, մանրածախ, գնման եւ այլն)
- գների պատմության հաշվառում
- գնացուցակների տպելու հնարավորություն
- նոր գների խմբային հաշվարկ այլ տեսակի գների հիման վրա

Խմբաքանակային հաշվառում

- մեկից ավելի չափման միավորի և փաթեթավորումների կիրառություն
- պիտանիության ժամկետների, ծագման երկրի, արտադրողի վերաբերյալ տեղեկության հաշվառում
- ապրանքները բնութագրող հատկություններ նկարագրելու և կիրառելու հնարավորություն

Աշխատանք փաստաթղթերի հետ

Անհրաժեշտ փաստաթղթերի ձեւավորում, որոնք կարելի է տպել, գրանցել և հետագայում խմբագրել (օրինակ Պահեստի մուտքի օրդեր, Հաշիվ-Ապրանքագիր, Դրամարկղի մուտքի օրդեր և այլն):

Օգտագործողների աշխատանքի իրավասությունների կառավարում

- հասանելի փաստաթղթերի և հաշվետվությունների սահմանում
- աշխատանքային ժամանակահատվածի սահմանում
- հասանելի պահեստների ցանկի սահմանում
- վաճառքի գների խմբագրման սահմանափակում
-

Գծիկավոր կոդի (barcode) օգտագործման հնարավորություն

- Փաստաթղթերում ապրանքների ընտրություն գծիկավոր կոդ կարդացող սարքի (սկաների)
- օգնությամբ
- Ապրանքների տարբեր չափման միավորների համար տարբեր գծիկավոր կոդերի կիրառություն
- Ապրանքների անվանացանկից գնապիտակի տպում